



Տարեկան գինն է 6 Արծաթ Մեդիանի.
Վեցամսեայ 3 1/2
Մեկ ծանուցումը տալին 2 դուրով է
Ստորագրութիւնները կանխիկ են:
տարաշաբաթները ամեն ամսոյ 1ին եւ
15ին կըսկսին:

Դուք երբայիք լրագրութեանն նամակ
ծախքը առնողին վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ եւ
իցէ գրութիւն խմբագրին պիտի ուղ-
ղուի. եւ ասոնց նամակը ծախքը խըր-
կողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐ
ՊՐԻՄԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՀԵՌԱԳՐԱՆՈՒՐ

Լոստրա 21 սեպտեմբեր
Օտմ. Բժնաօրինակ 50/8 507/8
Օտմ. Գործառնութիւն 1858/1 681/2 69
Օտմ. Գործառնութիւն 1862/1 70 701/2

Լոստրա 22 սեպտեմբեր
Օտմ. Բժնաօրինակ 50/1 51
Օտմ. Գործառնութիւն 1858/1 681/2 69
Օտմ. Գործառնութիւն 1862/1 70 701/2

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպայէն այս շարժում ալ դարձ-
եալ նշանակութեան արժանի լըր մը
չկայ:

Սկիզբնայի դեպքանաժողովին դործը
խիստ ծանր յառաջ կերթայ, և երբ լը-
մինստիւն ալ յայտնի չէ. Գերմանական
երկու մեծ տէրութիւնները չեն ուզեր ի-
րենց տկար որոշ դիւրութեամբ ձեռքէ
թողուլ. բայց արեւմտեան տէրութեանց
մանաւանդ Գաղղիոյ կայսեր բարեկամա-
կան միջնորդութիւնն ալ չկնաւոր մեր-
ժել, սեպտ. 3/15ին վերջապա՞ զինադա-
դարը նորոգելու յոժարեր են՝ մինչև խա-
ղաղութեան պայմաններուն վերջնական
կերպով հաստատուիլը:

Գաղղիացւոյ կայսրուհին այս օրերս
կամուսնի իրենք ծնունտ անուանով ծանրոր-
դութեան երաժ և ամիսի մը չափ Գեր-
մանիոյ Շվեյցարիա քաղաքի հանքային ջու-
րերը մանելու դացած ըլլալով, շատ հա-
ւանական է որ Ս. Կարօլին կայսրն
ալ այս օրերս Գերմանիա երթայ կայս-
րուհեայն քով, և այս առթիւ տեսակցու-
թիւն մ'ալ ընէ Բրուսելոյ թագաւորին
և Ռուսիոյ կայսեր հետ:

Եւրոպական լրագրաց խօսքին նայե-
լով՝ այս երեք վեհապետները սեպտեմբե-
րի վերջերը Պրանքֆորթ կ'ապաստուին:
Ուստի Եւրոպիէ կայսրուհեայն Շվեյցա-
րի ջուրերն երթալը պարտադէր պատը-
ւակ կամ առիթ մը կը համարուի սոյն
տեսակցութեան, որ անշուշտ քաղաքա-
կան նպատակներ կը ծածկէ իր մէջ:

Թուրքիոյ արապաւորութիւնն օր ըստ
օրէ զսպուկելու և վերջնապէս յոյս ար-
ւած ժամանակ՝ նոր դէպք մը պատահե-
ցաւ որ կրնայ ծանր հետեւանքներ ունե-
նալ:

Պէյնի արահայանութեանը յատկաց-
եալ տեսակ մը զուարթ ըսուած զինուոր-
ներ՝ Սուլթանի հիւանդանոցին բնակարանը
մանելով կողոպտելու փորձ փորձեր են:

Պէյն այս տարօրինակ զինուորները
քաղաքէն դուրս վաճառել է, բայց սպա-
նիական հիւանդանոցն այս թիւն և հատուց-
մամբ դո՛ւ չըլլալով, իր կառավարութեան
խնայ տուեր և հատուցում խնդրել է:

Հետեւաբար քանի մ'օրէն սպանիա-
կան նաւատորմի մը կ'ապաստուի Թու-
րքիոյ ջուրերը:

Փարիզէն սեպտ. 14 թուով դուրս
լըր մը կը ծանուցանէ թէ Թուրքիոյ

առջև խտրախող խտրական նաւատորմը
եւ կանչուեր է, և միայն երկու ֆրեա-
թոն պիտի ապասնէ Թուրքիոյ զանազան
խտրաղիները հարկ եղած ատեն սրաշա-
պանները համար:

Եւստրիոյ կառավարութիւնը՝ որ մին-
չև յարգ Զուստամի նոր թագաւո-
րութիւնը ծանուց չէր, վերջապէս ծան-
չեց. Սիկէց առիթ առնելով՝ Եւստրիոյ
լրագրիները կը յուսան որ Իտալիոյ թա-
ղաւորութիւնն ալ մօտ ժամանակէն կը
ծանչուի, և այս վերջինն ծանուցումը մե-
ծապէս օգտակար կը համարին Եւստրիոյ:

Պարսիկէն եկած վերջին լրագրերը կը
ծանուցանեն թէ Պարսիկ անդրկովկաս
գետաւանը քան որ պայմանաւորաբար
է Պարսիկ կառավարութեան՝ որ Սին-
նազաբիկի ներքին մէջ նաւարկութիւնն ար-
դիւնէ համար շինուած ամրութիւնները
քակէ. Եթէ այս առաջարկութիւնն ա-
պարդէն մնայ, Եւրոպոյ պատերազմական
նաւերն յիշեալ ամրութիւններուն դործը
պիտի լինընեն:

Երեւոյթին նայելով, Պարսիկ կա-
ռավարութիւնը միտք չունի այն ամրու-
թիւնները քակելու, կամ որ նոյն է՝ Սի-
նազաբիկի ներքին նաւարկութեան ար-
դիւնը վերջնելու, հետեւաբար շատ հա-
ւանական է որ Եւրոպայից պատերազմի
բռնուին Պարսիկ հետ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւոյթի ուրբաթ՝ գաղղիական Քառիք
անուն շոգեշարժ Ֆրեյմոնով մայրաքա-
ղաք հասաւ գաղղիացւոյ Ս. Կարօլին
կայսեր հօրաքեռորդի Սիւրաթ իշխանն
իր ընտանեացը հետ, և ուղղակի Գաղ-
ղիոյ դեսպանատունը լծաւ:

Յիշեալ բարձրաստիճան իշխանը բե-
րող շոգեշարժ Ֆրեյմոնով մայրաքաղաքին
նաւահանգիստը մտած ժամանակ՝ ողջնի
թիւնաօթիկներ արձակեց և փոխադարձա-
բար ողջունեցաւ արքունի թիւնաօթարա-
նի մարտիոյներէն:

Յայտնի է որ Ս. Գրան և եւրոպա-
կան մեծ տէրութեանց մէջ եղած դաշ-
նադրութեան համաձայն՝ Լիւսիանու կա-
ռավարիչը քրիստոնեայ պիտի ըլլայ և ե-
րեք տարին անգամ մը պիտի փոխուի:

Եւստրիոյ կառավարութիւնն Ս. Կարօլին
հայազգի Տափուլ փաշան ասիկէ երեք
տարի առաջ Լիւսիանու կառավար անուա-
նելով, իր իմաստուն և աշխուրջ կառավա-
րութեամբ երկիրը խաղաղութեան ու
բարեկարգութեան մէջ պահելուն և ժո-
ղովոյն սէրն ու անհաճութիւնը դրա-
ւելուն համար, օգոստոսիստ. Լիւսիանու
ին բարձր գոհութեան արժանացաւ:

Հետեւաբար Ս. Գրանը դաշնակից
տէրութեանց հետ խորհրդակցելով՝ Լի-
ւսիանու կառավարութեան վերաբերեալ
դաշնակցին մէջ քանի մը կարեւոր փոփո-
խութիւններ ըրաւ, և վերապէս Ս. Կարօլին
Տափուլ փաշան Լիւսիանու կառավար
անուանեց հինգ տարուան համար:

Հայազգի վեհապետը փաշային այս

բարձր պաշտօնին մէջ վերահաստատու-
թիւնն անխափա՝ ապացոյց մ'է իր քա-
ղաքալիտական բարձր հանձնարքն և առ-
կայեալ խափան բարեկամ կառավարութիւ-
նին ունեցած անձնուէր հաւատարմու-
թեանը, որով հինգ տարի ևս նոյն բարձր
պաշտօնին մէջ վերահաստատուելու կայ-
սերական շնորհաց արժանի ըլլալով՝ ընդ-
հանուր ազգիս ալ պարծանաց առիթ մը
եղած է:

Պայտերական հրամանաւ

Մէտիէի կառավարիչ Շէյխ իւլ-
Հարէմ Սեմ. Ս. Եմէթիֆաշան Շէյխ
իւլ-Հարէմ և Հապէշի ու Հիւսայի գա-
ւառներուն ընդհանուր կառավարիչ ան-
ուանեցաւ:

Ս. անայ նախորդ կառավարիչ Սեմ.
Ս. Եմէթ փաշան Սեմէի ընդհանուր կա-
ռավարիչ անուանեցաւ Ս. Ելիւրութեան
բարձր աստիճանաւ:

Սիւլէ յիսնիէի նախորդ գալմադամ Սի-
րիփիան Սեմ. Սուլթաֆա փաշան
Հապէշի և Հիւսայի ընդհանուր կառա-
վարիչ և Շէյխ իւլ-Հարէմի գալմադամ
անուանեցաւ:

Հառաւակալութեան ատենին նախա-
դա՛ Սեմ. Ս. Եմէթ փաշան տէրու-
թեան բարձրագոյն ատենին անգամ ան-
ւանեցաւ:

Սիւլթաֆա (Գալմադ) կառավարիչ
Սեմ. Ս. Եմէթ փաշան Հառաւակալութեան
ատենին նախադա՛ անուանեցաւ:

Սուլթաֆա կառավարիչ Սեմ. Ս. Եմ-
մէթ փաշան Սիւլթաֆա կառավարիչ ան-
ւանեցաւ:

Հեքեարի գալմադամ Սեմ. Ս. Ել-
սուլթա՛ Սուլթա փաշան Ս. անայ կառա-
վարիչ անուանեցաւ:

Պրուսայի գաւառին նախորդ ընդ-
հանուր կառավարիչ Սեմ. Ս. Եմէթ փա-
շան փաշան Հեքեարի գալմադամ ան-
ւանեցաւ:

Օգոստոսիստ. Լիւսիանու մայրաքա-
ղաքի գաղղիական դեսպանատան առաջին
խորհրդական քարաւաղար և դործակա-
տար Պ. Թ. Պիլիքիէին երրորդ կարգի
Օտմանիէ պատուանշան շնորհեց:

ԱԶԳԱՅԻՆ

Միջազգային Ս. Փրիզի հիւանդանոցին
նորոգութիւնը երկու ամիսէ 'ի վեր կը շա-
րունակէ, և արդէն բաւական յառաջ
դացած է:

Ս. անայ որ խնդրոյ մը կամ դործի
մը լոյ արտաքին երեւոյթը կը դիտեն ա-
ռանց խոր թափանցելու, դահլիճ թա-
սաստաններ ըրին այս ձեռնարկութեան
վրայ. ոմանք բողոքովն ունեցեալ դատե-
ցին, ոմանք անժամանակ, ոմանք ալ՝ ա-
ռանց ազգին ներկայ նեղ վիճակը դիտե-
լու, առաջարկեցին հինգ բողոքովն կոր-
ծանել և նոր մը կառուցանել քարուկիր
չէնքով:

Եւստրիոյ կարծեաց և առարկու-
թեանց արժէքը ողջմտութեամբ և ար-

դարապէս դատելու համար՝ պարզ սեպե-
ցինք անձամբ երթալ այցելութիւն մ'ը
նեղ աղապին հիւանդանոցին, և ներկայ
նորոգութեան վիճակն ու կարեւորութիւ-
նը քննելով և անցեալին հետ բարդատե-
լով՝ համառօտ տեղեկութիւն մը տալ մեր
արդոյ ընթերցողաց:

Ս. փեց ամիս կամ տարի մ'ա-
ռաջ հիւանդանոցին այցելութիւն ըրած և
անոր շէնքին անկանոն և գրեթէ կիսաւեր
վիճակը տեսած է, չկրնար չխոստովանիլ
ներկայ նորոգութեան անհրաժեշտ հար-
կաւորութիւնը. մանաւանդ երբոր իմա-
նայ և ստուգէ որ շէնքին մէկ քանի մա-
սերը մօտապէս կործանման վտանգի մէջ
էին, որուն առաջին առնուլ հարկ էր
անվիճական նորոգութեամբ:

Երբ բերկրութեամբ սրտի տեսնը
որ հիւանդանոցին շէնքը ոչ միայն փառնդ-
ազատ է հիւանդ, այլ և զանազան կարեւոր
և խիստ պիտանի փոփոխութիւններով փա-
յեջացած ու կանոնաւորուած ալ է: Եւրոպ
և կանանց հիւանդարաններուն բոլոր պա-
տահանները, առաստաղներն ու առիւ-
տակամանները նորոգուած ու ներկուած
են, և ծայրերն օգուէալ պաքլիտարաններ
շինուած:

Գաղղիոյ վերին յարկը կանոնա-
ւոր կերպով գաւառուած, ամեն կարե-
ւոր նորոգութիւններով ամրացած ու
փայլեցած է: Հիւսանոցը որոշ յարկ
մ'եղած և մէջը երկու սենեակ աւելցած
է. աղայոց երկու ննջարանին թէ՛ առաս-
տաղներն և թէ՛ տախտակամածը փոխուած,
և մինչև մահճակալները նորոգուած և
փայլեցած են երկուսն ըլլալէ զատ, պա-
հանորդաց համար երկու նոր սենեակ ա-
ւելցած է. նոյնպէս սեղանատուներ նորոգ-
ուած, սենեակներն աւելցած և պատուհան
ները մեծցած: Ս. արժարանի կոյանոցը՝ որ
վիշելու վրայ էր, գրեթէ 'ի հիւանդանոց
ւած և քովն ալ մեծ ջրհան մը շինուած է
ծորակներով: Գաղղիոյ ստորին յարկն ալ
բարձրացած, և ծայրը դանուած ննջա-
րանն ընդարձակուած է: Տղայք ձմեռ
ժամանակ անվտանգ եկեղեցի երթալ դա-
լու համար ալ մինչև եկեղեցեայն դուռը
վրան աղակիւն դոց ծանրոյ մը շինուելու
վրայ է:

Հիւանդ տղայոց համար ալ որոշ
տեղ մը պատրաստուած է ամեն պիտոյ-
իւր: Ս. փեց ամիս կամ տարի մ'ա-
ռաջ հիւանդանոցին այցելութիւն մէջ
ալ նոր աղբիւր մը շինուած և երկու սե-
ղանատու շինուած է, մէկը կանանց և
միւսն ալ աղջկանց:

Մառախանոցը՝ որ կանանց հիւան-
դանոցին տալին էր, ուրիշ տեղ մը փո-
խադրուած է:

Եւրոպ չորրորդ անկեղանոցն ալ՝ որ
նեղ շէնք մ'էր, բողոքովն պիտի վերանայ
և սպարանին տեղը փոխադրուի, որն որ շին-
ւելու վրայ է իր ամեն պիտոյիւրը: Եւս-
տրիոյ նորոգութեան մէջ կողմը վիշելու վրայ է,
պիտի նորոգուի. նմանապէս թէ՛ արանց
և թէ՛ կանանց անկեղանոցներուն ամեն
կողմը կարեւոր նորոգութեանց ենթա-
կայ եղած են:

Մտնցմէ զատ՝ արանց բաղանիքն հիւ-
նովն պիտի նորոգուի. և եկեղեցիին խոր-
խուլ հիմքը, ներքը, տեսչաց սենեակ

3. *Итого:*

Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆԻԼՅԻ ԽԱՆՆ